

**ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ
ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ**

ՊԵՂՈՒԹ, ԼԻՐԱՆԱՆ

2010

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Լիբանանի Հայոց Թեմը, իբրև անբաժան մասը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, հաւատարիմ կը մնայ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ հաւատքին, դաւանանքին եւ եկեղեցական ու ազգային աւանդական կանոններուն:

Լիբանանի Հայոց Թեմի Կանոնագրութեան հիմը կը կազմեն 1863ին պաշտօնապէս ճանչցուած Ազգային Սահմանադրութիւնը՝ իր ոգիով եւ Էական սկզբունքներով, եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կանոնագրութիւնը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Յօդ. 1.-

Լիբանանի Հայոց Թեմի վարչական կազմակերպութիւնը հիմնուած է Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ աւանդութիւններուն եւ Ազգային Սահմանադրութենէն ներշնչուած հետեւեալ սկզբունքներուն վրայ.-

ա.- Լիբանանի Հայոց Թեմին պատկանող իւրաքանչիւր անհատ ազգին նկատմամբ պարտաւորութիւններ ունի. ազգն այ, իր կարգին, իւրաքանչիւր հայ անհատի նկատմամբ պարտաւորութիւններ ունի: Փոխադարձաբար՝ իւրաքանչիւր անհատ իրաւունքներ ունի ազգէն, եւ ազգը անհատներէն:

բ.- Ազգին անդամ անհատներուն պարտաւորութիւններն են.- ազգի կարիքներուն պահանջած ծախսերուն մասնակից ըլլալ իւրաքանչիւրը իր կարողութեան չափով, ազգին խնդրած ծառայութիւններուն յօժարակամ յանձնառու ըլլալ եւ սիրայօժար ենթարկուիլ անոր տնօրինումներուն:

Անհատներուն այս պարտաւորութիւնները ազգին իրաւունքներն են:

գ.- Ազգին պարտաւորութիւններն են.- անհատ ազգայիներու բարոյական, մտաւորական եւ նիւթական կարիքներուն հոգ տանիլ, Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ դաւանանքն ու աւանդութիւնները անարատ պահել, նոր սերունդներուն ջամբել ուսում եւ կրթութիւն, ազգային հաստատութիւնները պայծառ պահել, անոնց հասոյթները օրինաւոր կերպով աւելցնել եւ ծախսերը իմաստութեամբ տնտեսել, ազգին ծառայութեան նուիրուած անձերուն ապրուստը բարելաւել եւ անոնց ապագան ապահովել, կարօտեալներուն

հայրաբար խնամք տանիլ, ազգայիններու միջեւ ծագած վեճերը արդարութեամբ լուծել եւ, վերջապէս՝ ազգային յառաջդիմութեան ի նպաստ անձնուիրաբար աշխատիլ:

Ազգին այս պարտաւորութիւնները ազգային անհատներու իրաւունքներն են:

դ.- Ազգը փոխանորդաբար ներկայացնող եւ այս փոխադարձ պարտաւորութիւններուն ու իրաւունքներուն կատարման տեսուչ եւ մատակարար Ազգային Իշխանութիւնը կը տնօրինէ Լիբանանի Հայոց Թեմի ներքին գործերը, համաձայն Լիբանանի Հայոց Թեմի ներկայ Կանոնադրութեան:

ե.- Որպէսզի իշխանութիւնը ազգային ըլլայ, պէտք է ներկայացուցչական (երեսփոխանական) ըլլայ:

զ.- Ներկայացուցչական (երեսփոխանական) իշխանութիւնը հիմնուած է իրաւունքի ու պարտաւորութեան փոխադարձութեան վրայ, որ հիմը կը կազմէ արդարութեան եւ ժողովրդավարութեան սկզբունքներուն: Ազգային իշխանութեան ուժը հիմնուած է ձայներու մեծամասնութեան վրայ, որմէ ան կը ստանայ իր օրինականութիւնը:

Յօդ. 2.-

Լիբանանի Հայոց Թեմը ունի հետեւեւալ ժողովները.

ա.- Ազգային Երեսփոխանական Ժողով:

բ.- Ազգային Վարչութիւն, որ կը բաղկանայ Կրօնական, Քաղաքական եւ Խառն Ժողովներէ:

Յօդ. 3.-

Լիբանանի Հայոց Թեմը իրաւատէրն է թեմի բոլոր ազգապատկան կալուածներուն:

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՄՓՈՒՆԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 4.-

Ազգային Երեսփոխանական Ժողովը Լիբանանի Հայոց Թեմի օրենսդիր բարձրագույն ժողովն է:

Յօդ. 5.-

Ազգային Երեսփոխանական Ժողովը կ'ունենայ 42 երեսփոխաններ, որոնց մէկ եօթներորդը եկեղեցական կ'ըլլայ, վեց եօթներորդը՝ աշխարհական: Ազգային երեսփոխաններու պաշտօնավարութեան շրջանը չորս տարի է:

Յօդ. 6.-

Ազգային Երեսփոխանական Ժողովի աշխարհական անդամները կ'ընտրուին Թեմի ժողովուրդին կողմէ: Իւրաքանչիւր ծխական շրջան կ'ընտրէ իր ծխականներու թիւին համապատասխան երեսփոխաններ: Երեսփոխաններու թիւերուն բաշխումը ծխական շրջաններուն վրայ կը կատարէ Ազգային Երեսփոխանական Ժողովը՝ Ազգային Վարչութեան Խառն Ժողովի առաջարկով:

Յօդ. 7.-

Ազգային Երեսփոխանական Ժողովի կրօնական անդամները կ'ընտրուին քահանայից դասուն կողմէ:

Յօդ. 8.-

Երեսփոխանական ընտրութեան կրնան մասնակցիլ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ 18 տարիքը բոլորած այն բոլոր զաւակները, առանց սեռի խտրութեան, որոնք վճարած են իրենց ազգային տուրքը եւ դատական կարգով չեն գրկուած իրենց քաղաքացիական կամ համայնքային իրաւունքներէն:

Յօդ. 9.-

Ազգային երեսփոխան կրնայ ընտրուիլ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ամէն անդամ, առանց սեռի խտրութեան, որ բոլորած է երեսուն տարիքը, կատարած է իր նիւթական պարտաւորութիւնները հանդէպ եկեղեցիին ու ազգին եւ դատական կարգով չէ գրկուած իր քաղաքացիական կամ համայնքային իրաւունքներէն:

Յօդ. 10.-

Ազգային Երեսփոխանական Ժողովին կը նախագահէ Առաջնորդը, իսկ անոր բացակայութեան՝ Առաջնորդական Փոխանորդը:

Յօդ. 11.-

Առաջնորդը կը կատարէ բացումը նորընտիր Երեսփոխանական Ժողովին եւ որպէս առժամեայ դիւան կը հրաւիրէ երեսփոխաններու երիցագոյնը՝ իբրեւ ատենապետ եւ կրտսերագոյնը՝ իբրեւ ատենադպիր: Առժամեայ դիւանին պարտականութիւնն է հաստատել երեսփոխաններու ընտրութեան օրինաւորութիւնը եւ կատարել մնայուն դիւանի ընտրութիւնը:

Յօդ. 12.-

Ազգային Երեսփոխանական Ժողովի տարեկան նստաշրջանը կը բացուի Փետրուար ամսուն:

Ազգային Երեսփոխանական Ժողովին գումարման վայրը Պէյրութի Ազգային Առաջնորդարանն է. արտակարգ պայմաններու մէջ, Ազգային Վարչութեան խառն Ժողովը, Երեսփոխանական Ժողովի Դիւանին հետ համաձայնաբար, կրնան որոշել տարբեր ժամադրավայր մը:

Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովը կ'առաջարկէ Ազգային Երեսփոխանական Ժողովին նստաշրջանին թուականն ու օրակարգը: Առաջնորդը, Երեսփոխանական Ժողովի Դիւանին համաձայնութիւնը ստանալէ ետք՝ Ժողովի թուականին եւ օրակարգին մասին, ազգային երեսփոխաններուն հրաւեր կ'ուղղէ: Հրաւերը պէտք է ուղղուի նստաշրջանի սկսելէն առնուազն տասնչորս օր առաջ: Հրաւերին կցուած պէտք է ըլլան նստաշրջանին օրակարգն ու քննելի հարցերուն վերաբերող անհրաժեշտ թղթածրարները:

Ազգային Երեսփոխանական Ժողովի արտակարգ նիստեր կրնան գումարուիլ Ազգային Վարչութեան Խառն, Կրօնական կամ Քաղաքական Ժողովներու, ինչպէս նաեւ Ազգային Երեսփոխաններու նուագագոյնը մէկ երրորդին գրաւոր պահանջով: Նման պահանջի մը պարագային, առաջնորդը, տեղեակ պահելէ ետք Երեսփոխանական Ժողովի Դիւանը եւ անոր հետ ճշդելէ ետք արտակարգ Ժողովի թուականն ու օրակարգը, հրաւեր կ'ուղղէ Ազգային Երեսփոխաններուն: Արտակարգ նստաշրջանի մը պարագային, երբ ստիպողական օրակարգ մը քննութեան կ'առաջարկուի, առաջնորդն ու Ազգային Երեսփոխանական Ժողովի Դիւանը կրնան զանց առնել տասնչորս օր առաջ հրաւեր ուղղելու պայմանը:

Ազգային Երեսփոխանական Ժողովը օրինաւոր կը համարուի, երբ Ազգային Երեսփոխաններու կէսէն աւելին (առնուազն 22 երեսփոխան) ներկայ է Ժողովին:

Յօդ. 13.-

Ազգային Երեսփոխանական Ժողովի դիւանին պաշտօնավարութեան ժամանակը երկու տարի է: Դիւանը կազմուած է ատենապետէ, փոխ ատենապետէ եւ երկու ատենադրպիրներէ: Դիւանը կ'ապահովէ նիստերու կանոնաւոր կայացումը, ատենապետը կամ փոխ ատենապետը կը վարեն Ժողովական նիստերը, ատենադրպիրները կ'օժանդակեն Ժողովավարական աշխատանքներուն եւ կ'ապահովեն նիստերու ատենագրութիւններու պատրաստութիւնը:

Յօդ. 14.-

Ազգային Երեսփոխանական Ժողովը.

ա.- Կը մշակէ եւ կը հաստատէ օրէնքներ՝ Թեմի Ազգային Իշխանութեան գործունէութեան բոլոր բնագաւառներուն վերաբերեալ: Մշակուած օրէնքները պէտք է համապատասխան ըլլան Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ դաւանանքին եւ նկարագրին, Ազգային Սահմանադրութեան ոգիին եւ ներկայ Կանոնագրութեան տրամադրութիւններուն:

բ.- Կ'ընտրէ եկեղեցական եւ աշխարհական պատգամաւորներ՝ մասնակցելու համար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի ընտրութեան Պատգամաւորական Ժողովին:

գ.- Կ'ընտրէ եկեղեցական եւ աշխարհական պատգամաւորներ՝ մասնակցելու համար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովին:

դ.- Կ'ընտրել Թեմի առաջնորդը եւ կը տեղեկագրել Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին՝ առ ի վաւերացում:

ե.- Կ'ընդունի առաջնորդին հրաժարականը:

զ.- Անհրաժեշտ պարագային կը պահանջէ առաջնորդին հրաժարականը:

է.- Երկու տարուան համար, կ'ընտրել Ազգային Վարչութեան Կրօնական եւ Քաղաքական Ժողովներու անդամները:

ը.- Կը լուծէ Ազգային Վարչութեան Կրօնական կամ Քաղաքական Ժողովները, եթէ անոնք գտնուին հակականոնագրային ընթացքի կամ այլ ծանրակշիռ թերացման մէջ:

թ.- Կ'ուսումնասիրել, կը քննէ եւ կը վաւերացնէ Ազգային Վարչութեան երկամեայ գործունէութեան ծրագիրը, Ազգային Վարչութեան ընտրութենէն առաւելագոյնը երկու ամիս ետք:

ժ.- Կ'ուսումնասիրել, կը քննէ եւ կը վաւերացնէ Ազգային Վարչութեան ներկայացուցած տարեկան նախահաշիւը:

ժա.- Լսելէ ետք Ազգային Վարչութեան բարոյական եւ նիւթական տեղեկագիրները, ինչպէս նաեւ Հաշուեքննիչ Յանձնախումբին գեկուցումը, կը քննէ եւ կը գնահատէ Ազգային Վարչութեան երկամեայ բարոյական եւ նիւթական գործունէութիւնը:

ժբ.- Կ'ընտրել եռանդամ Հաշուեքննիչ Յանձնախումբ մը՝ երկու տարուան համար: Հաշուեքննիչ Յանձնախումբի անդամներէն գէթ մէկը պարտի ըլլալ վկայեալ հաշուապահ կամ մասնագէտ համարակալ: Հաշուեքննիչ Յանձնախումբը կը հետեւի Ազգային Վարչութեան նիւթական գործառնութիւններուն՝ նուազագոյնը երեք ամիսը անգամ մը կատարելով անհրաժեշտ ստուգումը: Ազգային Վարչութեան պաշտօնավարութեան աւարտէն ամիս մը առաջ, Հաշուեքննիչ Յանձնախումբը կը քննէ Ազգային վարչութեան երկամեայ հաշիւները եւ իր քննութեան ու ստուգումներուն մասին տեղեկագիր կը ներկայացնէ Ազգային Երեսթոխանական Ժողովին:

ժգ.- Կը վերամշակէ ներկայ Կանոնագրութիւնը եւ փոփոխութիւններ կը մտցնէ անոր մէջ:

ԱՌԱՋՆՈՐԴ

Յօդ. 15.-

Առաջնորդը Լիբանանի Հայ Առաքելական համայնքի պաշտօնական ներկայացուցիչն է եւ հոգեւոր պետը՝ յաչս Լիբանանի պետութեան եւ համայնքի ժողովուրդին: Ան Լիբանանի մէջ պահապանն է Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ դաւանանքին, աւանդութիւններուն ու Ազգային Սահմանադրութեան սկզբունքներուն, եւ երաշխաւորը ներկայ Կանոնագրութեան տրամադրութիւններուն անխախտ գործադրումին:

Յօդ. 16.-

Առաջնորդը կ'ընտրուի Ազգային Երեսփոխանական Ժողովին կողմէ գաղտնի քուէարկութեամբ եւ ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ: Եթէ առաջին քուէարկութեան երկու երրորդի մեծամասնութիւն չգոյանայ, երկրորդ քուէարկութեան պարզ մեծամասնութիւնը բաւարար կը համարուի:

Յօդ. 17.-

Առաջնորդին պաշտօնավարութեան ժամանակամիջոցը վեց տարի է: Վեցամեայ պաշտօնավարութեան աւարտին, Ազգային Երեսփոխանական Ժողովը քուէներու պարզ մեծամասնութեամբ առաջնորդը կը վերահաստատէ իր պաշտօնին վրայ վեցամեայ նոր ժամանակաշրջանի մը համար:

Եթէ Ազգային Երեսփոխանական Ժողովը չվերահաստատէ առաջնորդը իր պաշտօնին վրայ, ան հրաժարած կը համարուի եւ առաջնորդական աթոռը՝ թափուր:

Յօդ. 18.-

Առաջնորդական աթոռը որեւէ պատճառով թափուր մնալու պարագային, Ազգային Վարչութեան Խառն Ժողովը եւ Ազգային Երեսփոխանական Ժողովի դիւանը միասնաբար անմի-ապէս կ'ընտրեն առաջնորդական տեղապահ մը, որ կը կատարէ առաջնորդի պաշտօնը՝ մինչեւ նոր առաջնորդի ընտրութիւնն ու վաւերացումը, որ պետք է կատարուի առաջնորդական աթոռի թափուր մնալէն մինչեւ առաւելագոյնը վեց ամիս:

Յօդ. 19.-

Առաջնորդի ընտրության գործընթացը կ'ըլլայ հետեւեալ ձեւով.

ա.- Ազգային Վարչութեան Խառն Ժողովը, առաջնորդական տեղապահին միջոցով, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսէն կը խնդրէ ընտրելի միաբաններու հնգանուն ցանկ մը:

բ.- Ազգային Վարչութեան Խառն Ժողովը Կաթողիկոսի տրամադրած հնգանուն ցանկէն կ'ընտրէ եռանուն ցանկ մը եւ երկու ցանկերը կը ներկայացնէ Ազգային Երեսփոխանական Ժողովին:

գ.- Խառն Ժողովի ներկայացուցած եռանուն ցանկէն Ազգային Երեսփոխանական Ժողովը կ'ընտրէ Թեմի առաջնորդը: Երեսփոխանական Ժողովը, ի պահանջել հարկին, եռանուն ցանկէն դուրս թեկնածուներ եւս կրնայ նկատի ունենալ եւ ընտրել անոնցմէ մէկը:

դ.- Ընտրութենէն անմիջապէս ետք, Ազգային Երեսփոխանական Ժողովի դիւանը ընտրութեան արդիւնքը կը տեղեկագրէ Կաթողիկոսին, որուն վաւերացումէն եւ օրհնութենէն ետք, ընտրեալ առաջնորդը կը ստանձնէ իր պաշտօնը:

ե.- Ընտրուած եւ ընտրութիւնը վաւերացուած առաջնորդը կը ներկայացուի Լիբանանի պետութեան՝ իբրեւ պետ Լիբանանի Հայոց Առաքելական Համայնքին:

Յօդ. 20.-

Առաջնորդը.

ա.- Կը հսկէ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ դաւանանքին եւ կանոններուն պահպանման ու ծիսական արարողութիւններու անթերի կատարման:

բ.- Կը հսկէ Ազգային Սահմանադրութեան սկզբունքներուն եւ ներկայ Կանոնագրութեան տրամադրութիւններուն անթերի գործադրութեան:

գ.- Եթէ ներկայ Կանոնագրութեան նկատմամբ ազգային ժողովականի մը կողմէ զանցառութիւն նկատէ, նախ բացատրութիւն կը պահանջէ համապատասխան ժողովի կամ խորհուրդի դիւանէն: Կրկնութեան պարագային, կարգի կը հրաւիրէ եւ վերջապէս Ազգային Երեսփոխանական Ժողովէն կամ Ազգային Վարչութեան Խառն Ժողովէն կը պահանջէ զանցառուին հրաժարականը:

դ.- Կը հսկէ հոգեւորականներու, եկեղեցիներու, ծիսական շրջաններու, ազգապատկան հաստատութիւններու եւ դպրոցներու գործունէութեան, ինչպէս նաեւ ազգապատկան կալուածներու բարւոք յանձանձումին:

ե.- Կը քննէ քահանայութեան եւ սարկաւագութեան թեկնածուներու արժանաւորութիւնը եւ ազգային Վարչութեան Կրօնական Ժողովին հաւանութեամբ կը ձեռնադրէ զանոնք:

զ.- Կրօնական Ժողովին հետ խորհրդակցելէ ետք, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին կը ներկայացնէ Թաղական Խորհուրդներու կողմէ եկեղեցականներու շնորհաբաշխութեան դիմումները (աւագ քահանայութիւն, լանջախաչ եւ ծաղկեայ փիղոն կրելու իրաւունք, եւայլն):

է.- Պարտագանցութեան պարագային, առժամաբար կ'առկախէ քահանայ մը իր պաշտօնէն եւ հարցը կը ներկայացնէ Ազգային Վարչութեան Կրօնական Ժողովին, առ ի քննութիւն եւ պատշաճ տնօրինում:

ը.- Կ'ապահովէ եկեղեցի չունեցող շրջաններուն հոգեւոր մատակարարումը:

թ.- Կ'այցելէ Թեմի ծխական շրջանները:

ժ.- Կը նախագահէ Ազգային Երեսփոխանական Ժողովին, Ազգային Վարչութեան Կրօնական ու Քաղաքական Ժողովներուն եւ ի հարկին՝ խորհուրդներու նիստերուն: Կը հրապարակէ վերոյիշեալ ժողովներուն որոշումները եւ կը հրահանգէ անոնց գործադրութիւնը:

ժա.- Կը ստորագրէ բոլոր պաշտօնական գրութիւնները:

ժբ.- Կը վարէ Ազգ. Առաջնորդարանի բոլոր գործերը:

ժգ.- Մղում կու տայ լիբանանահայ համայնքի հոգեւոր, մշակութային, կրթական, ընկերային, առողջապահական եւ տնտեսական կեանքին:

ժդ.- Կը հետապնդէ ու կը պաշտպանէ Լիբանանի Թեմի հայութեան իրաւունքները՝ ամէնուրեք: Կը սատարէ հայ ժողովուրդի պահանջատիրութեան:

ժե.- Յարաբերութիւն կը մշակէ հայկական յարանուանութիւններու եւ Լիբանանի համայնքներուն հետ:

Յօդ. 22.-

Եթէ Առաջնորդի գործունէութեան մէջ նկատուին զանցառումներ կամ շեղումներ ներկայ Կանոնագրութեան տրամադրութիւններէն, Ազգային Վարչութեան Կրօնական Ժողովը, Քաղաքական Ժողովը կամ Ազգային Երեսփոխանական Ժողովի անդամներուն առնչուած մէկ երրորդը կրնան պահանջել անոր հրաժարականը Ազգային Երեսփոխանական Ժողովէն: Ազգային Երեսփոխանական Ժողովը անմիջապէս նիստ կը գումարէ իր դիւանին հրաւերով եւ կը կազմէ հինգ երեսփոխաններէ բաղկացած Քննիչ Մարմին մը, որ մինչեւ

մէկ ամիս տեղեկագիր կը ներկայացնէ ժողովին: Առաջնորդին հրաժարականը պահանջած ազգային Երեսփոխանները չեն կրնար մաս կազմել Քննիչ Մարմինին: Ազգային Երեսփոխանական ժողովը հարցը կը վճռէ ձայներու երկու երրորդի մեծամասնութեամբ:

Յօդ. 23.-

Առաջնորդի երկարատեւ բացակայութեան, հիւանդութեան կամ պաշտօնը կատարելու հարկեցուցիչ արգելքի մը պարագային՝ Ազգային Վարչութեան Խառն ժողովը անոր առաջարկով կ'ընտրէ առաջնորդական փոխանորդ մը, որ կը ստանձնէ առաջնորդին բոլոր պարտականութիւնները: Առաջնորդական փոխանորդը կ'ըլլայ նախընտրաբար աւագ Քահանայ մը: Անոր պաշտօնը վերջ կը գտնէ, երբ առաջնորդին պաշտօնավարելու արգելքը կը վերանայ:

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽԱՌՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 24.-

Ազգային Վարչութեան Կրօնական եւ Քաղաքական ժողովները միասնաբար կը կազմեն Թեմի Խառն ժողովը: Խառն ժողովի ատենապետը Քաղաքական ժողովի ատենապետն է, ատենադպիրը՝ Կրօնական ժողովի ատենադպիրը:

Յօդ. 25.-

Խառն ժողովը.

ա.- Երբ առաջնորդական աթոռը թափուր մնայ, Ազգային Երեսփոխանական ժողովի դիւանին մասնակցութեամբ կ'ընտրէ առաջնորդական տեղապահ մը, որ կը կատարէ առաջնորդի ընթացիկ պարտականութիւնները եւ վեց ամսուան ընթացքին կը կազմակերպէ նոր առաջնորդի ընտրութիւնը:

բ.- Կը վերադասաւորէ ծխական շրջանները, նոր ծխական շրջաններ կը ստեղծէ եւ կը ներկայացնէ Ազգային Երեսփոխանական ժողովին՝ վաւերացման համար:

գ.- Կը նշանակէ Դատաստանական Խորհուրդի եւ Վերաքննիչ Ատենանի անդամները:

դ.- Ազգային Երեսփոխանական Ժողովին կ'առաջարկե աշխարհական ազգային երեսփոխաններու բաշխումը ծխական շրջաններուն վրայ:

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 26.-

Ազգային Վարչութեան Կրօնական Ժողովը կը բաղկանայ եօթը քահանաներէ, որոնք կ'ընտրուին Ազգային Երեսփոխանական Ժողովին կողմէ, երկու տարուան համար: Կրօնական Ժողովը համարատու է Ազգային Երեսփոխանական Ժողովին: Կրօնական Ժողովի անդամները վերընտրելի են:

Յօդ. 27.-

Կրօնական Ժողովին անդամ կրնան ընտրուիլ այն քահանաները, որոնք առնուազն երեք տարուան ծառայութիւն ունին Լիբանանի Թեմէն ներս:

Յօդ. 28.-

Կրօնական Ժողովը նիստ կը գումարէ նուազագոյնը ամիսը մէկ անգամ: Նիստերը կը վարէ ատենապետը, որ առաջնորդին հետ միատեղ կը հսկէ տրուած որոշումներուն գործադրութեան:

Յօդ. 29.-

Կրօնական Ժողովը, Թաղական Խորհուրդներու հետ խորհրդակցելէ ետք, Առաջնորդին կ'առաջարկե շրջաններու ծխատէր քահանաներու նշանակումը, տեղափոխութիւնը եւ պաշտօնէ արձակումը:

Յօդ. 30.-

Կրօնական Ժողովը.

ա.- Կը պահպանէ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ դաւանանքը եւ կանոնները, հետամուտ կ'ըլլայ կրօնական ծեսերուն, խորհուրդներուն եւ եկեղեցական արարողութիւններուն կանոնաւոր եւ պատշաճ կատարման:

բ.- Չարկ կու տայ Թեմի ծխականներու կրօնաբարոյական ու ազգային դաստիարակութեան, կը հսկէ եկեղեցական ու ազգային ասանդութիւններու պահպանումին:

գ.- Կը նշանակէ կրօնադաստիարակչական խորհուրդ մը, Թեմի Կիրակնօրեայ վարժարաններու աշակերտութեան, դպրաց դասերու եւ ընդհանրապէս երիտասարդներու կրօնական դաստիարակութեան համար:

դ.- Ուսումնական Խորհուրդին հետ գործակցաբար, կը հսկէ ազգային վարժարաններու աշակերտութեան կրօնական դաստիարակութեան:

ե.- Հետամուտ կ'ըլլայ քահանայութեան թեկնածուներու կրօնական, ազգային եւ բարոյական պատրաստութեան:

զ.- Կը հրատարակէ կրօնագիտական յատուկ դասագիրքեր՝ Կիրակնօրեայ Վարժարաններու համար, ինչպէս նաեւ՝ ծխականներու կրօնաբարոյական կեանքին զարկ տուող ծխական եւ արարողական գիրքեր:

է.- Կը կազմակերպէ եկեղեցական համագումարներ եւ յատուկ դասախօսութիւններով զարկ կու տայ Քահանայ հայրերու կրօնագիտական վերաւորակաւորման:

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Յօդ. 31.-

Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովը կը բաղկանայ եօթը կամ ինը աշխարհական անդամներէ, որոնք կ'ընտրուին Ազգային Երեսփոխանական Ժողովին կողմէ երկու տարւան համար: Քաղաքական Ժողովը համարատու է Ազգային Երեսփոխանական Ժողովին: Քաղաքական Ժողովի անդամները վերընտրելի են:

Յօդ. 32.-

Քաղաքական Ժողովին պարտաւորութիւնն է Լիբանանի Հայոց Թեմի ազգային կեանքին տնօրինումը:

Յօդ. 33.-

Քաղաքական ժողովը.

ա.- Կը պաշտպանէ համայնքին իրաւունքները՝ ամենուրեք:

բ.- Կը նշանակէ Ուսումնական, Տնտեսական եւ Կալուածային Խորհուրդները: Քաղաքական ժողովը կրնայ նշանակել նաեւ, ըստ կարիքի, այլ խորհուրդներ եւ մնայուն կամ ժամանակաւոր յանձնախումբեր:

գ.- Կը լուծէ նշանակուած խորհուրդ մը կամ յանձնախումբ մը, եթէ ան գտնուի հակականոնագրային եւ Ազգային Երեսփոխանական ժողովի որոշումներուն հակառակ ընթացքի մէջ:

դ.- Կը նշանակէ եւ կը դադրեցնէ Ազգային Առաջնորդարանի պաշտօնեաները՝ առնելէ ետք համապատասխան ժողովին, խորհուրդին կամ յանձնախումբին կարծիքը:

ե.- Կը հետեւի խորհուրդներու եւ յանձնախումբերու գործունէութեան, կը համակարգէ անոնց աշխատանքները եւ կը հսկէ անոնց վրայ:

զ.- Չորս տարին անգամ մը կը կազմակերպէ Թաղական Խորհուրդներու ընտրութիւնը, կը հսկէ ընտրութեան օրինական ընթացքին եւ կը վաւերացնէ զանոնք:

է.- Կը հետեւի թաղականութիւններու գործունէութեան, կու տայ հրահանգներ եւ կը կատարէ ցուցմունքներ՝ հարկ եղած պարագային:

ը.- Եթէ Թաղական Խորհուրդ մը գտնուի հակականոնագրային ընթացքի մէջ, Քաղաքական ժողովը նախ բացատրութիւն կը պահանջէ ատենապետէն: Հակաօրինական ընթացքը կրկնուելու պարագային՝ գրաւոր կերպով կ'ազդարարէ:

Եթէ Թաղական Խորհուրդը երրորդ անգամ շարունակէ թերացումը, Քաղաքական ժողովը կը լուծէ զայն, կը նշանակէ ժամանակաւոր նոր Թաղական Խորհուրդ մը, ապա նոր ընտրութիւն կը կազմակերպէ, մինչեւ երեք ամիս:

թ.- Կը ստանձնէ եւ կը քննէ Թաղական Խորհուրդներու քառամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրները, անոնց պաշտօնավարութեան աւարտէն նուազագոյնը ամիս մը առաջ:

ժ.- Երբ Թաղական Խորհուրդի անդամ մը ամբաստանութեան տակ գտնուի, կ'առկախէ զայն մինչեւ քննութեան աւարտը:

ժա.- Կը կազմակերպէ Ազգային Երեսփոխանական ժողովի կրօնական եւ աշխարհական անդամներու ընտրութիւնը՝ չորս տարին անգամ մը: Կը կազմակերպէ ծխական շրջաններէ:

ներս մասնակի ընտրություն, մահացած կամ հրաժարած ազգային երեսփոխանները փոխարինելու համար:

Ժբ.- Եթե Քաղաքական Ժողովը հարցի մը լուծումը իր ձեռնհասությունէն վեր դատէ, զայն կը փոխանցէ Ազգային Երեսփոխանական Ժողովին:

Ժգ.- Նոր ազգային վարժարան մը հաստատելու, ազգային վարժարանի մը կարգավիճակը փոխելու կամ ազգային վարժարան մը փակելու կարելիությունները կ'ուսումնասիրէ եւ կայացած որոշումը գործադրութեան կը դնէ՝ Ազգային Երեսփոխանական Ժողովի հաւանությունը ստանալէ ետք:

Ժդ.- Կ'ապահովէ Ազգային Երեսփոխանական Ժողովին հաւանությունը՝ երկամեայ ծրագիրին մէջ չնախատեսուած գործեր եւ տարեկան նախահաշիւին մէջ չնախատեսուած հասոյթներ ապահովելու կամ ծախսեր ընելու համար:

Ժե.- Կ'ապահովէ միջոցներ, բարելաւելու համար Ազգային Առաջնորդարանի հասոյթները եւ այդ նպատակին ծառայող առաջարկներ կը ներկայացնէ Ազգային Երեսփոխանական Ժողովին:

Ժզ.- Կը պատրաստէ Ազգային Վարչութեան երկամեայ գործունէութեան տեղեկագիրն ու նիւթական գործառնություններու հաշուեկշիռը եւ զանոնք կը ներկայացնէ Ազգային Երեսփոխանական Ժողովին:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

Յօդ. 34.-

Ուսումնական Խորհուրդը կը նշանակուի Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովին կողմէ, երկու տարուան համար: Ան կազմուած կ'ըլլայ եօթը կամ ինը անդամներէ:

Յօդ. 35.-

Ուսումնական Խորհուրդը կ'ունենայ գործավար մը եւ, ըստ կարիքի՝ այլ պաշտօնեաներ (կրթական քննիչ, պետական հարցեր հետապնդող պատասխանատու, քարտուղար, եւ այլն):

Յօդ. 36.-

Ուսումնական Խորհուրդը.

ա.- Կը վարէ ազգային վարժարանները եւ կը հսկէ անոնց բարեկարգութեան:

բ.- Կը մշակէ ազգային վարժարաններու կրթական-ուսումնական ծրագիրը՝ հիմնուելով պետական ծրագիրին եւ հայեցի դաստիարակութեան պահանջներուն վրայ: Կրթական-ուսումնական ծրագրի մշակման առիթով, Ուսումնական Խորհուրդը կը խորհրդակցի ազգային վարժարաններու տնօրէններուն եւ կրթական մարզի այլ պատասխանատուներու հետ:

գ.- Կը հաստատէ ազգային վարժարաններու տարեկան ծրագիրները եւ նախահաշիւները: Նախահաշիւները հաստատելէ առաջ, Ուսումնական Խորհուրդը կ'առնէ Տնտեսական Խորհուրդին կարծիքը:

Յօդ. 37.-

Ազգային Իշխանութեան բոլոր յարաբերութիւնները ազգային վարժարաններու հետ կը կատարուին Ուսումնական Խորհուրդին միջոցով:

Յօդ. 38.-

Ուսումնական մարզին առնչուող տնտեսական, կալուածային, շինարարական ու մասնագիտական բնոյթի այլ հարցեր, Ուսումնական Խորհուրդը կը փոխանցէ Քաղաքական Ժողովին, որ զանոնք կը յղէ համապատասխան խորհուրդին կամ յանձնախումբին՝ խորհրդատուութեան համար: Ուսումնական Խորհուրդը Քաղաքական Ժողովի միջոցով կը ստանայ խորհրդատուական կարծիքը եւ անոր նկատառումով կը կայացնէ իր որոշումը: Նման պարագաներու, որոշումը գործադրելի դառնալէ առաջ, պէտք է վաւերացուի Քաղաքական Ժողովէն:

Յօդ. 39.-

Ազգային վարժարաններու աշխատանքները կը տարուին «Ազգային Վարժարաններու Կանոնագրութեան» հիման վրայ: Ազգային Վարժարաններու Կանոնագրութիւնը կը մշակուի ու կը հաստատուի Ազգային Երեսփոխանական Ժողովին կողմէ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդ. 40.-

Տնտեսական Խորհուրդը կը նշանակուի Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովին կողմէ, երկու տարուան համար: Ան կազմուած կ'ըլլայ եօթը կամ ինը անդամներէ:

Յօդ. 41.-

Տնտեսական Խորհուրդը.

ա.- Իւրաքանչիւր տարուան Յունուար ամսուն կը պատրաստէ նախորդ տարուան իրականացած հաշուեկշիռը եւ կը ներկայացնէ Քաղաքական Ժողովին: Տնտեսական Խորհուրդը կրնայ հաշուեկշիռի պատրաստութիւնը վստահիլ մասնագէտ հաշուապահի մը կամ հաշուապահական գրասենեակի մը:

բ.- Հիմնուելով Քաղաքական Ժողովի երկամեայ ծրագիրին, ինչպէս նաեւ խորհուրդներու եւ յանձնախումբերու ծրագիրներուն վրայ, իւրաքանչիւր տարուան Դեկտեմբեր ամսուն կը պատրաստէ յառաջիկայ տարուան նախահաշիւ-պիւտճէն, որ կը ներկայացնէ Քաղաքական Ժողովին:

գ.- Աշխատանք կը տանի՝ հաւասարակշռելու համար Ազգային Վարչութեան տնտեսական եւ էլեւմտական գործառնութիւնները. կը ջանայ մուտքերը աւելցնել ու ծախսերը կրճատել: Կը հսկէ նիւթական մուտքերու եւ ելքերու կանոնաւորութեան:

դ.- Ընդունման կամ մերժումի պատճառաբանուած տեսակէտով կը դիմէ Քաղաքական Ժողովին, երբ խորհուրդ մը կամ յանձնախումբ մը նախահաշիւով չնախատեսուած եւ ընթացիկ ծախսերը գերազանցող ելքերու պահանջ կը ներկայացնէ իրեն:

ե.- Հաշուեքննիչի միջոցով կանոնաւորութեամբ կը հետեւի Ազգային Իշխանութեան ենթակայ կառոյցներուն ու հաստատութիւններուն հաշիւներու ճշգրտութեան եւ հաշուապահական կանոնաւորութեան: Պարբերական կանոնաւոր հաշուեքննութիւններուն արդիւնքները կը տեղեկագրէ Քաղաքական Ժողովին:

զ.- Հետամուտ կ'ըլլայ Ազգային Տուրքի գանձումներու կանոնաւորութեան: Կը ճշդէ Ազգային Տուրքի սակացոյցը, գանձումի դրութիւնը եւ կը հսկէ անոնց գործադրութեան: Այս աշխատանքին համար, ի պահանջել հարկին, կը կազմէ ազգային տուրքի յանձնախումբ մը:

է.- Կը ճշդէ խորհրդակատարութիւններու, հաստատագիրներու, դատական ծախսերու, դամբարաններու եւ այլ ծառայութիւններու սակերը՝ համապատասխան խորհուրդին կամ

յանձնախումբին հետ գործակցաբար: Կը ձեռնարկէ ճշդուած սակերու կիրարկումին, ստանալէ ետք Քաղաքական Ժողովի վաւերացումը:

ը.- Կը ճշդէ Ազգային Առաջնորդարանի պաշտօնեաներու վարձատրութեան սակերը եւ զանոնք գործադրութեան կը դնէ Քաղաքական Ժողովի վաւերացումէն ետք: Կը քննէ Դիւանապետին կողմէ ներկայացուած յաւելեալ աշխատանքի կամ գնահատական յաւելավճարի առաջարկները, որոնք կը գործադրէ առաջնորդին կողմէ վաւերացուելէ ետք:

թ.- Կ'երաշխաւորէ Ազգային Իշխանութեան պաշտօնեաներու իրաւունքները. աշխատավարձ, օրինական յաւելումներ, ապահովագրութիւն, հատուցում, հանգստեան թոշակ: Կը հսկէ աշխատանքի օրինական ժամանակացոյցի եւ արձակուրդներու կանոնաւորութեան:

ժ.- Կը տնօրինէ ազգային կալուածներու շահարկումը եւ կ'ապահովէ անոնց եկամուտներուն յաւելումը:

ժա.- Աշխատանք կը տանի Ազգային Իշխանութեան եկամուտները աւելցնելու, պատրաստ գումարները յանձնաձեռն միջոցով: Ի պահանջել հարկին, Քաղաքական Ժողովի հաւանութեամբ, կը կատարէ փոխառութիւններ եւ կը կազմակերպէ հանգանակութիւն:

ԿԱԼՈՒՎԾՈՅ ԽՈՐՀՈՒՐԳ

Յօդ. 42.-

Կալուածոց Խորհուրդը կը նշանակուի Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովին կողմէ, երկու տարուան համար: Ան կազմուած կ'ըլլայ հինգ, եօթը կամ ինը անդամներէ:

Յօդ. 43.-

Կալուածոց Խորհուրդը.

ա.- Կը կատարէ ազգապատկան կալուածներու շինարարական ծրագիրներուն սերտողութիւնը եւ շինարարութիւններու տնօրինումը:

բ.- Կը գնահատէ շահարկման ենթակայ ազգապատկան կալուածներու վաճառման կամ վարձակալման արժէքները:

գ.- Կ'ապահովե, կը դասաւորե եւ կը ցանկագրե ազգապատկան կալուածներու սեփականագիրները, քարտէսներն ու օրինական այլ փաստաթուղթերը եւ կ'այժմեականացնէ զանոնք:

դ.- Կու տայ իր հիմնաւորուած կարծիքը՝ Քաղաքական Ժողովին, ազգապատկան կալուածի մը գնման կամ վաճառքի պարագային:

ե.- Հետամուտ կ'ըլլայ ազգապատկան կալուածներու բարուք վիճակով պահպանման:

Յօդ. 44.-

Գերեզմանատուներու աշխատանքներուն համար Կալուածոց Խորհուրդը կրնայ նշանակել իրաւական եւ շինարարական գործերուն հսկող յանձնախումբ մը, որ իր հսկողութեան տակ կ'իրականացնէ գերեզմանատուներու յանձնախումբը:

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդ. 45.-

Լիբանանի Հայ Առաքելական Համայնքի դատաստանական գործերը կը կատարուին համաձայն երկու կանոններու.-

ա.- Կանոն Լիբանանի Հայ Եկեղեցիի Անձնական Իրաւանց:

բ.- Կանոն Դատավարութեան Հայաստանեայց Եկեղեցիի Անձնական Իրաւանց Ատեաններու:

Վերոյիշեալ երկու կանոնները մշակուած են Լիբանանի Հանրապետութեան 2 Ապրիլ 1951-ի օրէնքին («Քրիստոնէայ եւ Հրեայ համայնքներու կրօնական իշխանութեանց իրաւասութիւնները սահմանող օրէնք») հիման վրայ, վաւերացուած են Լիբանանի Թեմի Գաւառական Ժողովէն եւ հաստատուած՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան եւ Լիբանանեան պետութեան կողմէ:

Յօդ. 46.-

Ազգային Վարչութեան Իսառն Ժողովը կը նշանակէ երեք քահանաներէ եւ երեք աշխարհականներէ կազմուած Դատաստանական Խորհուրդ մը: Դատաստանական Խորհուրդի անդամները չեն կրնար Կրօնական կամ Քաղաքական Ժողովներու անդամներ ըլլալ: Դատաստանական Խորհուրդի նախագահը առաջնորդն է, որ իբրեւ Նախադատ Ատեան գործող Խորհուրդի նիստերուն կրնայ մասնակցիլ անձնապէս կամ իր ներկայացուցիչին միջոցով: Դատաստանական Խորհուրդի նիստերը կը վարէ ատենապետը, որ կ'ընտրուի աշխարհական անդամներու մէջէն: Դատաստանական Խորհուրդը կրնայ իր դատական նիստերը վարելու համար հրաւիրել մասնագէտ իրաւագէտ մը:

Յօդ. 47.-

Վերաքննիչ Ատեանը կազմուած կ'ըլլայ երեք կրօնական եւ երեք աշխարհական անդամներէ, որոնք կ'ընտրուին Ազգային Վարչութեան Իսառն Ժողովին կողմէ՝ Կրօնական եւ Քաղաքական Ժողովներու անդամներէն. Վերաքննիչ Ատեանի նախագահը ի պաշտօնէ առաջնորդն է, որ սոյն պաշտօնը կը կատարէ անձամբ կամ փոխանորդի մը միջոցով:

Յօդ. 48.-

Ըստ Լիբանանի Հայ Եկեղեցիի Անձնական Իրաւանց Կանոնի 64-րդ յօդուածին, «Դատը երբ ներկայացուի Առաջնորդարան, Դատաստանական Խորհուրդի Նախագահը եւ ատենապետը իրենց ներկայութեան կը հրաւիրեն երկու կողմերը եւ հաշտեցնելու ամէն փորձ կ'ընեն»: Այս հաշտեցման փորձին համար, Դատաստանական Խորհուրդի նախագահին ու ատենապետը կրնան ի հարկին նշանակել իրենց օժանդակող հաշտեցման յանձնախումբ մը:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳՆԵՐ

Յօդ. 49.-

Լիբանանի Հայոց Թեմի եկեղեցական-ծխական շրջանները կը կոչուին Թաղականություններ, եւ կ'ունենան Թաղական Խորհուրդներ, ընտրուած շրջանի ժողովուրդին կողմէ, չորս տարուան համար:

Թաղական Խորհուրդներու կազմութեան եւ ընտրութեան, պաշտօնին ու պարտաւորութիւններուն, գործունէութեան ու յարաբերութիւններուն եւ կարգապահական հարցերուն վերաբերեալ կանոնները կը մշակուին եւ կը վաւերացուին Ազգային Երեսփոխանական Ժողովին կողմէ (տես «Կանոնագրութիւն Թաղական Խորհուրդներու Լիբանանի Հայոց Թեմի»): Այդ կանոնները կը բխին Ազգային Սահմանադրութեան ոգիէն եւ ներկայ Կանոնագրութեան տրամադրութիւններէն:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Յօդ. 50.-

Ազգային Վարչութեան Կրօնական եւ Քաղաքական Ժողովները, Խորհուրդներն ու Յանձնախումբերը կ'ունենան մէկական դիւաններ, կազմուած ատենապետէ եւ ատենադրպիրէ: Ատենապետը կը վարէ ժողովական նիստերը. ատենադրպիրը կը վարէ ժողովական նիստերը. ատենադրպիրը կը հսկէ արձանագրութիւններու կանոնաւորութեան:

Յօդ. 51.-

Ազգային Վարչութեան Կրօնական եւ Քաղաքական Ժողովները կրնան ներկայ Կանոնագրութեան մէջ չիշուած յանձնախումբեր նշանակել, յատուկ աշխատանքի մը համար՝ անոնց գործունէութեան մարզերու յստակ սահմանումով:

Յօդ. 52.-

Եթե Կրօնական կամ Քաղաքական ժողովները կորսնցնեն իրենց մեծամասնությունը՝ մահերու կամ հրաժարումներու պատճառով, լուծուած կը համարուին: Ազգային Երեսփոխանական Ժողովը Առաջնորդին հրաւերով արտակարգ նիստ կը գումարէ եւ կ'ընտրէ նոր Կրօնական կամ Քաղաքական Ժողով՝ նախորդ պաշտօնավարութեան ժամանակաշրջանը լրացնելու համար:

Յօդ. 53.-

Եթե խորհուրդ մը կամ յանձնախումբ մը կորսնցնէ իր մեծամասնությունը՝ մահուան կամ հրաժարումներու պատճառով, լուծուած կը համարուի: Քաղաքական Ժողովը անոր տեղ կը նշանակէ նոր մը՝ ամբողջացնելու համար նախորդին պաշտօնավարութեան ժամանակաշրջանը:

Յօդ. 54.-

Երբ Ազգային Վարչութեան Կրօնական կամ Քաղաքական Ժողովներու անդամ մը հրաժարի կամ ժողովականներուն թիւը նուազի տարբեր պատճառով, ժողովը կը շարունակէ պաշտօնավարել, պայմանով որ մեծամասնությունը հիմնուի անդամներու ամբողջական թիւին վրայ:

Յօդ. 55.-

Երբ Խորհուրդի մը կամ յանձնախումբի մը անդամներէն մէկը հրաժարի կամ դադրի տարբեր պատճառներով, անոր տեղ Քաղաքական Ժողովը ուրիշ մը կը նշանակէ:

Յօդ. 56.-

Բոլոր խորհուրդներն ու յանձնախումբերը, իրենց նշանակումէն ետք, կը մշակեն երկամեայ գործունէութեան ծրագիր եւ մինչեւ մէկ ամիս կը ներկայացնեն Քաղաքական Ժողովին:

Կրօնական եւ Քաղաքական Ժողովները, իրենց ընտրութենէն ետք, առաջին հրթին կը նշանակեն տեսուչ խորհուրդներն ու յանձնախումբերը եւ այս վերջիններուն երկամեայ գործունէութեան ծրագիրները նկատի առնելով կը մշակեն երկամեայ գործունէութեան

իրենց ծրագիրները եւ մինչեւ երկու ամիս կը ներկայացնեն Ազգային Երեսփոխանական Ժողովին՝ վաւերացման համար:

Յօդ. 57.-

Իրենց պաշտօնավարութեան աւարտէն երկու ամիս առաջ, տեսուչ խորհուրդներն ու յանձնախումբերը կը պատրաստեն իրենց երկամեայ գործունէութեան տեղեկագիրը, եւ ի պահանջեալ հարկին նիւթական գործառնութիւններու հաշուեկշիռը ու կը ներկայացնեն Քաղաքական Ժողովին: Կրօնական ու Քաղաքական ժողովները, նկատի ունենալով տեսուչ խորհուրդներու եւ յանձնախումբերու տեղեկագիրները, կը պատրաստեն իրենց գործունէութեան տեղեկագիրը ու Ազգային Վարչութեան նիւթական գործառնութիւններու հաշուեկշիռը եւ կը ներկայացնեն Ազգային Երեսփոխանական Ժողովին:

Յօդ. 58.-

Ազգային Երեսփոխանական Ժողովին, Կրօնական եւ Քաղաքական ժողովներուն, խորհուրդներուն եւ յանձնախումբերուն մէջ որոշումները կ'առնուին անդամներուն ամբողջական թիւին մեծամասնութեան քւէով. բացակաները ձեռնպահ կը համարուին: Ազգային Վարչութեան Խառն Ժողովին մէջ որոշումները կը կայանան, երբ Կրօնական եւ Քաղաքական ժողովներու անդամներուն մեծամասնութիւնը, անշատաբար, թեր կը քուէարկէ:

Յօդ. 59.-

Ազգային Առաջնորդարանը կ'ունենայ դիւանապետ մը, որ վարչագիտական պատրաստութիւն ունեցող եւ հայերէն ու արաբերէն լեզուներուն քաջաձանօթ անձանորութիւն մը կ'ըլլայ: Դիւանապետը կը նշանակուի Քաղաքական Ժողովին կողմէ, կը մասնակցի անոր նիստերուն եւ կը կատարէ անոնց արձանագրութիւնը: Դիւանապետը կ'ապահովէ Ազգային Վարչութեան որոշումներուն գործադրութիւնը եւ կը համակարգէ Ազգային Առաջնորդարանի վարչական աշխատանքները: Ան տնօրէնն է Ազգային Առաջնորդարանի պաշտօնէութեան եւ կը հսկէ անոր աշխատանքին: Դիւանապետը կ'իրագործէ ժողովներու, խորհուրդներու եւ յանձնախումբերու միջեւ կանոնական կապերը եւ կ'ապահովէ Ազգային Վարչութեան մարմիններու ներդաշնակ գործունէութիւնը:

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդ. 60.-

Ներկայ Կանոնագրության մեջ վարչական չնախատեսուած խնդիրներու լուծումը եւ որեւէ տրամադրության մեկնաբանութիւնը կը կատարուի Ազգային Երեսփոխանական Ժողովին կողմէ՝ ըստ ազգային Սահմանադրության սկզբունքներուն եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կանոնագրության տրամադրութիւններուն:

Յօդ. 61.-

Լիբանանի Հայոց Թեմի Կանոնագրութիւնը կրնայ փոփոխութեան ենթարկուիլ Ազգային Երեսփոխանական Ժողովին ներկայ եղող երեսփոխաններուն ձայներու երկու երրորդով, պայմանով որ ներկայ ձայներուն երկու երրորդը Ազգային Երեսփոխանական Ժողովի ամբողջական կազմի պարզ մանծամասնութենէն նուազ չըլլայ: Փոփոխութիւնը գործադրութեան կը դրուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Ընդհանուր Ժողովին կողմէ վաւերացուելէ ետք:

Կանոնագրության մեջ փոփոխութեան առաջարկ կրնան ներկայացնել Ազգային Վարչութեան Կրօնական, Քաղաքական եւ Խառն ժողովները կամ Ազգային Երեսփոխանական Ժողովի առնուազն տասը անդամներ:

Յօդ. 62.-

Լիբանանի Հայոց Թեմի Կանոնագրութիւնը բաղկացած է 62 յօդուածներէ: Ան հաստատուած է Թեմի Ազգային Գաւառական Ժողովի 20/10/2006-ի նիստին եւ գործադրութեան արտօնութիւն ստացած Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի 22/2/2008-ի Գիրով:

**ԱՉԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ
ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔ**

Լիբանանի Թեմի Գաւառական Ժողովը, գործադրութեան դնելով 20-10-2006ին հաստատուած եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ Կաթողիկոսի 22-2-2008 թուականի պաշտօնագրով գործադրութիւնը արտօնուած Լիբանանի Հայոց Թեմի Կանոնագրութիւնը, կը հաստատէ հետեւեալ օրէնքը Ազգային Երեսփոխանական Ժողովի ընտրութեան մասին.-

Ա.- Կանոնագրային տրամադրութիւններ

Յօդուած 1.-

Լիբանանի Հայոց Թեմի Կանոնագրութեան մէջ «Ազգային Երեսփոխանական Ժողով» գլուխը կը պարունակէ 11 յօդուածներ (Յօդուածներ 4-14):

Բ.- Ընտրութեան թուական եւ յայտարարութիւն

Յօդուած 2.-

Երբ Ազգային Երեսփոխանական Ժողովի պաշտօնավարութեան շրջանը կը մօտենայ իր աւարտին, Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովը կ'որոշէ նոր Երեսփոխանական Ժողովի ընտրութեան թուականը: Նոր Երեսփոխանական Ժողովի ընտրութեան իբրեւ թուական պէտք է որոշուի նախորդ Երեսփոխանական Ժողովի պաշտօնավարութեան աւարտէն առաջ՝ առաւելագոյնը 6 եւ նուազագոյնը 2 շաբաթներու միջեւ Կիրակի օր մը:

Յօդուած 3.-

Քաղաքական Ժողովը Նոր Երեսփոխանական Ժողովի ընտրութեան թուականը կը յայտարարէ ընտրութեան թուականէն մէկ ամիս առաջ: Յայտարարութիւնը կը կատարուի եկեղեցիներու բեմերէն եւ հաղորդակցական միջոցներով (գրաւոր եւ բանաւոր մամուլ, ելեկտրոնային մամուլ, կայքէջ):

Յօդուած 4.-

Երեւափոխանական Ժողովի թեկնածուներու արձանագրութիւնը տեղի կ'ունենայ Ազգային Առաջնորդարանի դիւանատան մէջ, աշխատանքի ժամերուն, ընտրութեան թուականէն առաւելագոյնը 14 եւ նուագագոյնը 7 օր առաջ: Քաղաքական Ժողովը արձանագրութեան համար ճշգրիտ թուականները կը հաղորդէ ընտրութեան թուականի հաղորդագրութեան մէջ:

Թեկնածութեան յետս կոչման դիմում կարելի է ներկայացնել ընտրութեան թուականէն մինչեւ 3 օր առաջ:

Յօդուած 5.-

Ազգային Երեսփոխանական Ժողովի ընտրութեան թեկնածու կրնան ըլլալ Լիբանանի Հայոց Թեմի Կանոնագրութեան յօդուած 9-ի պայմանները լրացնող ազգայինները: Թեկնածութեան արձանագրութեան համար հարկ է ճշդել թեկնածութեան ծիսական շրջանը եւ ներկայացնել.

ա- Ինքնութիւնը հաստատող փաստաթուղթ,

բ- Մկրտութեան հաստատագիր,

գ- Ընտրութեան տարուան ազգային տուրքի վճարման հաստատագիր:

Գ.- Ընտրութեան կազմակերպում

Յօդուած 6.-

Ազգային Երեսփոխանական Ժողովի ընտրութեան Կեդրոնական Մարմինը Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովն է, նախագահութեամբ առաջնորդին, իսկ անոր քացակայութեան՝ փոխանորդին կամ տեղապահին:

Յօդուած 7.-

Իւրաքանչիւր ծիսական շրջանի մէջ կը կազմուի Ծիսական Ընտրական Մարմին, աւագերէց քահանայի նախագահութեամբ: Ծիսական Ընտրական Մարմինը կը նշանակուի Թաղա-

կանութեան կողմէ եւ կ'ունենայ 7 անդամ, որոնցմէ երկուքը թաղականութեան դիւանի անդամներն են (ատենապետ եւ ատենադպիր), իսկ հինգը՝ ծխականներ, որոնք կրնան թաղականներ ըլլալ կամ ոչ:

Գ.- Ընտրութեան գործընթաց

Յօդուած 8.-

Իւրաքանչիւր ծխական շրջանի մէջ, Ծխական Ընտրական Մարմինը կը ճշդէ եւ Եկեղեցւոյ մուտքին կը ցուցադրէ Լիբանանի Հայոց Թեմի Կանոնագրութեան յօդուած 8-ի պայմանները լրացնող ընտրելու իրաւունք ունեցող ազգայիններու անուանացանկը: Անուանացանկը հաստատուած պէտք է ըլլայ Ընտրական Կեդրոնական Մարմինին (Քաղաքական Ժողով) կողմէ: Անուանացանկը պէտք է ցուցադրուի ընտրութեան թուականէն գէթ երկու շաբաթ առաջ: Ազգայիններ իրաւունք ունին ցուցակներու սրբագրութիւն (անունի յաւելում) առաջարկելու մինչեւ ընտրութեան նախորդող օրը, թաղականութիւններու դիւանատուները, աշխատանքային ժամերուն:

Յօդուած 9.-

Ազգային Երեսփոխանական Ժողովի երեսփոխաններու ընտրութիւնը տեղի կ'ունենայ ծխական եկեղեցիներու դիւանատուներուն մէջ, առաւօտեան ժամը 9-էն մինչեւ երեկոյեան ժամը 17, գաղտնի քուէարկութեամբ: Քուէարկութեան կը հսկէ Ծխական Ընտրական Մարմինը: Ծխական Ընտրական Մարմինը, քուէարկութիւնը սկսելէ առաջ կը ստուգէ քուէատուփին դատարկ ըլլալը, կը փակէ զայն եւ բանալին պահ կը դնէ նախագահ աւագերէցին մօտ: Իւրաքանչիւր ընտրող, քուէարկելէ ետք, կը ստորագրէ ընտրական ցուցակին վրայ, իր անունն դիմաց:

Յօդուած 10.-

Քուէարկութեան փակումէն անմիջապէս ետք, Ծխական Ընտրական Մարմինը կը կատարէ քուէահամար: Քուէատուփը բանալի եւ ստուգելէ ետք, որ քուէներու թիւը կը համապատասխանէ ցուցակին վրայ ստորագրուած քուէարկողներու թիւին, կը կարդացվին քուէները եւ կ'արձանագրուին: Արդիւնքը հաշուելէ ետք, կը կազմուի արձանագրութիւն, զոր կը ստորագրեն Ծխական Ընտրական Մարմնի բոլոր անդամները եւ նախագահ

աւագերէցը: Արձանագրութիւնը եւ քուէաթերթիկները կը տեղաւորուին պահարանի մը մէջ, զոր փակելէ եւ թաղականութեան կնիքով կնքելէ ետք, նոյն երեկոյեան Ծխական Ընտրական Մարմինը կը յանձնէ Ընտրական Կեդրոնական Մարմինին:

Յօդուած 11.-

Ընտրական Կեդրոնական Մարմինը ընտրութեան արդիւնքները պաշտօնապէս կը յայտարարէ ընտրութեան յաջորդ օրը:

Ե.- Մասնակի ընտրութիւն

Յօդուած 12.-

Եթէ Երեսփոխանական Ժողովի պաշտօնավարութեան աւարտէն աւելի քան վեց ամիս առաջ բաց մը գոյանայ ազգային Երեսփոխաններու կազմին մէջ, տեղի կ'ունենայ մասնակի ընտրութիւն այն ծխական շրջանին մէջ ուր գոյացած է բացը:

Յօդուած 13.-

Մասնակի ընտրութիւնը տեղի պէտք է ունենայ երեսփոխանական աթոռի թափուր մնալէն նուազագոյն մէկ եւ առաւելագոյն երկու ամիս ետք: Մասնակի ընտրութեան թուականը կ'որոշէ Ազգային Վարչութեան Քաղաքական Ժողովը:

Յօդուած 14.-

Մասնակի ընտրութեամբ ընտրուած երեսփոխանը կ'ամբողջացնէ իր փոխարինած երեսփոխանին պաշտօնավարութեան ժամանակաշրջանը:

Չ.- Բողոքարկման կարգը

Յօդուած 15.-

Ընտրութեան արդիւնքներուն դէմ թեկնածուները կրնան բողոքել գրաւոր, առաջնորդին ուղղուած նամակով, ընտրութեան յաջորդող 3 օրերու ընթացքին: Բողոքի նամակը պէտք է պարունակէ բողոքը արդարացնող փաստացի տուեալներ:

Յօդուած 16.-

Բողոքները կը քննուին Ազգային Դատաստանական Խորհուրդի Վերադատ Ատեանին կողմէ բողոքի ներկայացման ժամկետին աւարտման յաջորդող 7 օրերու ընթացքին (ընտրութենէն 10 օր ետք): Վերադատ Ատեանի վճիռը վերջնական է եւ անբեկանելի:

Է.- Նորընտիր Երեսփոխանական Ժողովի պաշտօնավարութեան սկիզբ

Յօդուած 17.-

Նորընտիր Երեսփոխանակն Ժողովի առաջին նիստը կը կայանայ, նախագահ Առաջնորդի հրաւերով, նախորդ Երեսփոխանական Ժողովի պաշտօնավարութեան աւարտի թուակա- նէն ետք: